
**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԴԱՇՏԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ**

ԲԱՐՍԵՂՅԱՆ Ի. Վ.

Լինելով խոր սոցիալ-քաղաքական երևույթ՝ զբոսաշրջությունը նշանակալիորեն ազդում է տարածաշրջանի աշխարհաքաղաքական և տնտեսական կացության վրա: Զբոսաշրջությունը շահավետ և եկամտաբեր բնագավառ է և ներդրումների արդյունավետության տեսանկյունից համեմատվում է գազանավթային արդյունահանման և վերամշակման արդյունաբերության, ինչպես նաև մեքենաշինական արտադրության զարգացման ծավալների հետ: Զարգացած երկրների տնտեսական, սոցիալական և քաղաքական կայունության միջազգային փորձը ցույց է տալիս, որ միմիայն զբոսաշրջության շնորհիվ է, որ պետությունների աշխարհագրական դիրքը, բնակլիմայական ռեսուրսները և տեսարժան վայրերը դառնում են համընդհանուր հասարակական բարօրություն: Այս իրողությունը, ինչպես նաև XXI դարասկզբին 630 մլն զբոսաշրջային այցելությունների հասած զբոսաշրջային հոսքերի թվաքանակը և պահանջարկի աճը հաշվի առնելով՝ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը (այսուհետև՝ ՉՀԿ) կանխատեսում է զբոսաշրջային հոսքերի եռակի ավելացում առաջիկա 20 տարիներին: Զբոսաշրջության գլոբալ բարոյագիտական օրենսգիրքը, որն ընդունվեց ՉՀԿ Գլխավոր ասամբլեայում, հետևյալ խորհուրդահանձնարարականն է հղում այն պետական-հասարակական կառույցներին, որոնք իրականացնում են զբոսաշրջությունը զարգացնելու քաղաքականություն. «Զբոսաշրջային քաղաքականությունն անհրաժեշտ է իրականացնել այնպես, որ այն նպաստի այցելության շրջանների բնակչության պահանջմունքների բավարարմանը և կենսամակարդակի բարձրացմանը»¹:

Աճի արագ տեմպերի շնորհիվ զբոսաշրջությունը համարվում է XXI դարի ֆենոմեն: Այն համաշխարհային տնտեսության առաջատար և առավել դինամիկ զարգացող ոլորտներից է: Բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներում զբոսաշրջության ոլորտը զգալի ներդրում ունի ՀՆԱ-ի ձևավորման, բնակչության զբաղվածության ապահովման, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման, ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման և արտաքին առևտրային հաշվեկշռի ավելացման գործընթացներում:

Զբոսաշրջության ներդաշնակ զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով, ներառյալ ժողովրդագրական, բնակլիմայական, աշխարհագրական, սոցիալ-հոգեբանական, տնտեսական, պատմական, կրոնական, իրավաքաղաքական և այլն: Իսկ զբոսաշրջության ոլորտն իր յուրահատկությամբ միակն է, որն ուղղակի և անուղղակի ազդեցություն

¹ Տե՛ս *WTO Basic Documents, Madrid, 1994, www.world-tourism.org*

ունի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի զարգացման վրա: Այն հսկա-յական ազդեցություն է գործում տնտեսության այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են գյուղատնտեսությունը, տրանսպորտը, կապիտալ շինարարությունը, կենցաղային սպառման ապրանքների արտադրությունը և այլն: Նպաստում է նաև գիտության ու մշակույթի զարգացմանը, միջմշակութային համագործակցության և միջազգային շփումների խորացմանը՝ կատարելով յուրօրինակ «կատալիզատորի» դեր պետությունների միջև սոցիալ-տնտեսական և մշակութային փոխհարաբերություններում: Զբոսաշրջությունն այսօր բավական կայուն տեմպերով զարգանում է նաև Հայաստանի Հանրապետությունում: Վերջին տարիներին այն դարձել է հանրապետության առավել արագ և դինամիկ զարգացող ճյուղերից մեկը: ՀՀ զբոսաշրջության ոլորտի ներկա իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարությունը տնտեսության պետական զարգացման հայեցակարգային մոտեցումներում մեծ տեղ է հատկացնում այդ բնագավառում նպատակաուղղված պետական քաղաքականություն վարելուն: Այդ են վկայում կառավարության ընդունած մի շարք հիմնարար փաստաթղթեր, որոնցից են «ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգը», «ՀՀ համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագիրը», ՀՀ զբոսաշրջության զարգացման վերաբերյալ տարբեր տարիներին ընդունված պետական ծրագրերը և այլն:

Զբոսաշրջային ինդուստրիան ամբողջությամբ ներառվում է փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում և որպես աշխատուժ ընդգրկում է հասարակության սոցիալապես առավել խոցելի խավերին՝ երիտասարդներին և կանանց: Զբոսաշրջության չափաբաժինը համախառն ներքին արդյունքում կազմում է մոտ 6-7%²: Վերջին տարիներին հանրապետություն այցելող միջազգային զբոսաշրջիկների քանակի միջին տարեկան աճը կազմել է 25%³: Ըստ վիճակագրական տվյալների՝ 2005 թվականին ՀՀ է այցելել 318563, 2004 թ. 262959 զբոսաշրջիկի համեմատ՝ 21%-ով ավելի միջազգային այցելու: Ենթադրվում է, որ աճի նման տեմպերի պահպանման դեպքում միջազգային այցելությունների թիվը 2010 թվականին կհատի կես միլիոնի ցուցանիշը⁴: Նշված թվական տվյալները ցույց են տալիս, որ հանրապետությունում պետական իշխանության և անհատ գործարարների հետաքրքրությունը հետզհետե աճում է զբոսաշրջության հանդեպ՝ որպես բիզնեսի համեմատաբար դինամիկ տեսակի, որը, կարծում ենք, կարելի է բացատրել հետևյալ գործոններով. ա) զբոսաշրջային գործունեություն ծավալելը համեմատաբար չի պահանջում մեծ ներդրումներ, բ) զբոսաշրջային շուկայում կարող են հաջողությամբ փոխգործակցել խոշոր, միջին և փոքր ձեռնարկությունները, գ) զբոսաշրջային բիզնեսը հնարավորություն է ընձեռում արագ կերպով շրջանառության մեջ դնելու կապիտալը:

Միջազգային այցելությունների աճին զուգահեռ՝ ավելանում է նաև արտարժույթի ներհոսքը հանրապետություն: Համաձայն մեկ զբոսաշրջ-

² <http://www.armstrat.am>

³ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Ե., 2006:

⁴ <http://www.armenia 2020.org>

ջիկի հաշվով միջազգային զբոսաշրջությունից ստացվող եկամուտների հաշվարկման ՁՀԿ ընդունված մեթոդիկայի՝ զբոսաշրջիկը, Հայաստանի Հանրապետությունում անցկացնելով 5-7օր, միջինը ծախսում է 800-1000 ԱՄՆ դոլար՝ առանց տրանսպորտային ծախսերն ընդգրկելու⁵:

ՀՀ-ն հետզհետե խորացնում է մասնակցությունը զբոսաշրջային ոլորտի միջազգային կազմակերպություններին: 1997 թվականից Հայաստանի Հանրապետությունը լիիրավ անդամի կարգավիճակով անդամակցում է ՄԱԿ-ի (Միավորված ազգերի կազմակերպություն) ՁՀԿ-ին⁶: Մեր երկրի մասնակցությունը ՁՀԿ, միջազգային և տարածաշրջանային այլ կազմակերպությունների հետ համատեղ ծրագրերի և միջոցառումների մշակման և իրականացման գործընթացներին խորացնում է համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, արտերկրի զբոսաշրջային ոլորտը կարգավորող համապատասխան մարմինների և կառույցների հետ: Հայաստանի Հանրապետության պատվիրակությունները մասնակցել են ՁՀԿ-ի կազմակերպած համաժողովներին և հանդիպումներին Պորտուգալիայում, Սեուլում, Յալթայում, Պեկինում, Սենեգալում և այլ երկրներում: Հայաստանի Հանրապետությունը ներգրավված է ՁՀԿ-ի կազմակերպած տարածաշրջանային և միջազգային խոշոր ծրագրերում, մասնավորապես «Մեծ Մետաքսի ճանապարհ» առևտրային ծրագրում⁷: 2005 թ. նոյեմբերի 1-2-ին Թբիլիսիում ՀՀ պատվիրակությունը մասնակցել է զբոսաշրջության վիճակագրության և զբոսաշրջության արբանյակային հաշվի կառուցման գծով կազմակերպված աշխատանքային երկրորդ սեմինարին: Իսկ 2005 թ. դեկտեմբերի 20-21-ին Ծաղկաձորում «Տրանսկովկասյան զբոսաշրջության նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համատեղ կազմակերպվել է զբոսաշրջության տարածաշրջանային համաժողով:

Զբոսաշրջության բնագավառում համագործակցության միջկառավարական համաձայնագրեր են ստորագրվել Հայաստանի Հանրապետության կառավարության և Սիրիայի Արաբական Հանրապետության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Ուրուգվայի Հանրապետության, Արգենտինայի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի Հանրապետության, Դրոգոստանի Հանրապետության, Ուկրաինայի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Թուրքմենստանի Հանրապետության, Ռումինիայի Հանրապետության, Բուլղարիայի Հանրապետության, Լեհաստանի Հանրապետության, Հունաստանի Հանրապետության, Իրանի Իսլամական Հանրապետության, Կիպրոսի Հանրապետության, Լիբանանի Հանրապետության, Հնդկաստանի Հանրապետության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության, Պորտուգալիայի Հանրապետության կառավարությունների միջև:

Զբոսաշրջության բնագավառի իրավական կարգավորումը պետական քաղաքականության հիմնահիմունքներից է: ՀՀ կառավարության կողմից վերջին տարիներին ընդունվել են զբոսաշրջային և հարակից ոլորտները

⁵ Տե՛ս <http://www.minted.am>

⁶ ՀՀ անդամակցության մասին ՁՀԿ որոշումը կայացվել է 1997 թ. Ստամբուլում կայացած ՁՀԿ Գլխավոր Ասամբլեայի 12-րդ նստաշրջանում:

⁷ *Study on Visa Facilitation in the Silk Road Countries, WTO, Madrid, 2001, p.1-3.*

կարգավորող մի շարք օրենսդրական փաստաթղթեր, որոնց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ՀՀ կառավարությունը զբոսաշրջությունը համարում է պետական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը և համապատասխան նորմատիվ-օրենսդրական դաշտի ձևավորմամբ նպաստում է այդ ոլորտի կայուն զարգացմանը: 2000 թ. ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգը»⁸ և «ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիրը»⁹, իսկ 2003 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից հաստատվել են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» և «Լի-ցենզավորման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»¹⁰ ՀՀ օրենքները: Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները ամրագրված են «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքում¹¹. 1) ճանաչել զբոսաշրջությունը՝ որպես տնտեսության գերակա ճյուղ, 2) աջակցել զբոսաշրջային գործունեությանը և ոլորտի առաջնային ուղղությունների զարգացման համար ստեղծել բարենպաստ իրավական, տնտեսական և կառուցվածքային պայմաններ, 3) սահմանել զբոսաշրջության գերակա ուղղությունները, 4) իրականացնել Հայաստանի Հանրապետության՝ որպես զբոսաշրջության համար բարենպաստ երկրի նկարագրի ձևավորումը, 5) ստեղծել պայմաններ զբոսաշրջիկների, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների օրինական շահերի և իրավունքների պաշտպանությունն իրականացնելու համար, 6) իրականացնել զբոսաշրջության բնագավառում միջազգային համագործակցության զարգացման ապահովումը, 7) աջակցել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից օրենքով սահմանված հասարակական միավորումներին:

ՀՀ կառավարությունը հաստատել է նաև «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման հայեցակարգը» և «ՀՀ տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիրը»¹², որտեղ համակարգված ձևով ներկայացված է ՀՀ տարածքում առողջարանային զբոսաշրջության զարգացման ռազմավարությունը:

Պետությունն իրականացրել է զբոսաշրջության ոլորտի զարգացումը խթանող մի շարք միջոցառումներ, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի վավերացրած հարկային փաթեթում կատարված փոփոխությունների շնորհիվ ԱԱՀ-ից ազատվել է ներգնա զբոսաշրջությունը:

ՀՀ

կառա-

⁸ ՀՀ զբոսաշրջության զարգացման հայեցակարգ, ՀՀ կառավարության հ. 15 որոշում, 20.IV.2000:

⁹ Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր, ՀՀ կառավարության հ. 32 որոշում, 3.VIII.2000:

¹⁰ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք, 8.VIII.2001:

¹¹ «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 17.XII.2003:

¹² Հայաստանի Հանրապետության տարածքում կուրորտային առողջարանների և հանգստյան տների զարգացման պետական ծրագիր, ՀՀ կառավարության հ. 39 որոշում, 2.X.2003:

վարությունը մշակել է նաև ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագրի երկրորդ փուլի հիմնական միջոցառումների ցանկը¹³:

Ներկա փուլում, մեր կարծիքով, պետք է հատկապես կարևորվեն այն ծրագրերն ու միջոցառումները, որոնք ուղղված կլինեն ՀՀ մարզերում զբոսաշրջության ոլորտի համամասնական զարգացման ապահովմանը, աղքատության կրճատմանն ու բնակչության բարեկեցության բարձրացմանը: Զբոսաշրջությունը դեռևս չի ընկալվում որպես համայնքային զարգացման ու ներդրումների ներգրավման միջոց, քանի որ համայնքային բնակչությունը դուրս է մնացել զբոսաշրջության զարգացման գործընթացներից: Զբոսաշրջային գործունեությունն ունի ընդգծված մայրաքաղաքային բնույթ, որի հետևանքով ենթակառուցվածքների և ներդրումների կենտրոնացում է տեղի ունենում, որն էլ իր հերթին հանգեցնում է հանրապետության տարածքում եկամուտների անհավասարաչափ բաշխմանը: Ավելին, համայնքներում առկա զբոսաշրջային ռեսուրսներից ձևավորելով զբոսաշրջային արտադրանք՝ մայրաքաղաքային զբոսաշրջային օպերատորները շուկայում իրացնում են այն՝ ստանալով մեծ եկամուտներ, իսկ համայնքներում համայնքային բնակչությունը հանդես է գալիս միմիայն «սպասարկողի» կարգավիճակում: Առկա հիմնախնդրի կարևորությունը հաշվի առնելով՝ պետությունը նույնպես սկսել է քայլեր ձեռնարկել համարժեք լուծումներ գտնելու ուղղությամբ, մասնավորապես մշակվել և 2002 թ. ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «ՀՀ համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագիրը»¹⁴, որի իրականացման հիմնական նպատակը մարզերում զբոսաշրջության համամասնական զարգացման ապահովումն է: Ծրագրի շրջանակներում նախատեսվում են հետևյալ միջոցառումները. ա) համայնքներում հասարակական հիմունքներով ձևավորել շահագրգիռ կամավորների խմբեր, որոնք հանձն կառնեն իրականացնել սեփական բնակչության վայրերում (համայնք, մարզ) առկա զբոսաշրջային ռեսուրսների գրանցումը և համակարգումը, բ) հիմնել տեղեկատվական կենտրոններ, գ) անցկացնել հատուկ կրթական ծրագրեր, դասընթացներ, դ) ստեղծել գրասենյակային, տարածքային և տնտեսական ենթակառուցվածքներ, ե) կենտրոնները ապահովել համապատասխան տեխնիկական միջոցներով, զ) ստեղծել տեղեկատվական ցանցեր:

Այս ծրագրի շրջանակներում իրականացվել է նաև «Տուրիզմի զարգացման կենտրոն Վայոց ձորում» ծրագիրը: Վայքի «Աշխատանք և հայրենիք» հասարակական կազմակերպության ջանքերով Վայոց ձորի մարզում «Եվրասիա» հիմնադրամի աջակցությամբ, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (*USAID*) տրամադրած ֆինանսական միջոցներով իրականացվել է զբոսաշրջության զարգացման մասնագիտացված կենտրոն հիմնելու ծրագիրը, որը նպատակ ուներ նպաստելու ներգնա և

¹³ 2006 թ. ՀՀ զբոսաշրջության զարգացման պետական ծրագիր, հ. 1746 որոշում, 13.X.2005:

¹⁴ Հայաստանի Հանրապետության համայնքներում զբոսաշրջության զարգացման ծրագիր, ՀՀ կառավարության հ. 43 որոշում, 10.X.2002:

ներքին զբոսաշրջության զարգացմանը մարզի տարածքում¹⁵: Մեր կարծիքով, նմանատիպ նախաձեռնություններն ու ծրագրերը ժամանակավոր բնույթ կկրեն, եթե չստեղծվի և չկիրառվի կառավարման հստակ գործող համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի համայնքները ևս ընդգրկել զբոսաշրջային գործունեության ոլորտում: Հայաստանի Հանրապետության հարուստ, բազմազան բնական և պատմամշակութային ժառանգությունը լայն հնարավորություններ է ընձեռում զբոսաշրջության զարգացման համար, մասնավորապես՝ ՀՀ մարզերում ագրարային զբոսաշրջության զարգացման: Բազմազան կլիմայական պայմանները, հարուստ բուսական և կենդանական աշխարհը՝ հազվագյուտ (էնդեմիկ) տեսակների առատությամբ, պատմամշակութային հուշարձանների տեղաբաշխվածությունը բնական հուշարձանների անմիջական հարևանությամբ, ձևավորում են զբոսաշրջային ռեսուրսների այն հսկայական ու յուրօրինակ ներուժը, որն անհրաժեշտ է հատկապես էկոլոգիական զբոսաշրջության ծավալման համար, որը ՉՀԿ որդեգրած չափանիշներով ներկայումս միջազգային զբոսաշրջության կայուն զարգացման հիմնական ուղղությունն է¹⁶: Անհրաժեշտ է շեշտել, որ տարեկան ամենամեծ հավելաճն աշխարհում գրանցվել է հոգուտ էկոլոգիական զբոսաշրջության: Զբոսաշրջության կայուն զարգացումն ապահովելու համար հիմնարար փոփոխություններ են անհրաժեշտ ենթակառուցվածքներում՝ հատկապես ավտոճանապարհների շինարարության հարցում: Իսկ տեղավորման ենթակառուցվածքները նորացնելիս առանձնապես պետք է հատուկ ուշադրություն դարձնել ազգային ոճով կառուցված գյուղական տիպի փոքր և միջին չափերի հյուրանոցներին՝ դրանք համապատասխանացնելով միջազգային չափանիշներին: Արձանագրենք նաև, որ զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման համար մեծածավալ ներդրումներ են կատարվել հանրապետությունում, կառուցվել են 30 նոր հյուրանոցներ և ռեստորաններ¹⁷, կատարվում են կապիտալ ներդրումներ քաղաքաշինության և զվարճանքի օբյեկտների ոլորտում, միջազգային չափանիշներին համապատասխան՝ վերակառուցվում է «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը, իրագործվում է Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն դարձնելու նպատակային խնդիրների լուծման ծրագիրը¹⁸, որի շնորհիվ հնարավոր կլինի ներկայացնել հայրենական զբոսաշրջային արդյունքի նոր որակ, զբոսաշրջային գրավչության նոր վայրեր, ինչպես նաև ձմեռային զբոսաշրջության զարգացման շնորհիվ երկարաձգել զբոսաշրջային սեզոնը Հայաստանի Հանրապետությունում:

Արտագնա զբոսաշրջության զարգացմանը զուգահեռ՝ հանրապետությունում արագ տեմպերով զարգանում է նաև ներքին զբոսաշրջությունը,

¹⁵ «Հայաստանի մրցունակ մասնավոր հատված» (*CAPS-Competitive Armenian Private Sector Project*), www.armeniainfo.am

¹⁶ *Data Base of Tourism Statistic. WTO Publications, Madrid, www.world-tourism.org*

¹⁷ <http://www.armstat.am>

¹⁸ «Ծաղկաձորը միջազգային չափանիշներին համապատասխանող զբոսաշրջային կենտրոն. նպատակային խնդիրների լուծման ծրագիր», ՀՀ կառավարության հ. 948-Ն որոշում, 9.06.2005:

ինչը վկայում է բնակչության կենսամակարդակի բարելավման և առողջարանային զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման մա-սին: Ներքին զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճի ապահովումը նույնպես ոլորտի պետական քաղաքականության հիմնական ուղղություններից է: Եթե 1997 թ. ներքին զբոսաշրջիկների թիվը կազմել է 53 հազար մարդ, 2001 թ.՝ 117079 մարդ, 2002 թ.՝ 121215 մարդ, 2003 թ.՝ 195065 մարդ, 2004 թ.՝ 221133 մարդ, ապա 2005 թ. այդ թիվն աճել է մոտ հինգ անգամ և հասել 250 հազարի ցուցանիշը կազմելով 268664 մարդ¹⁹: Իսկ միջազգային զբոսաշրջիկների թվաքանակի կայուն աճի ապահովման մեծ նշանակություն ունի միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի Հանրապետության որպես զբոսաշրջության համար գրավիչ և հրապուրիչ երկրի նկարագրի ձևավորումը և ամրապնդումը, միջազգային զբոսաշրջային շուկային ՀՀ-ի ինտեգրումը: ՀՀ-ի զբոսաշրջային արդյունքը շարունակաբար ներկայացվում է միջազգային ճանաչում ստացած զբոսաշրջային ցուցահանդես-տոնավաճառներում Գերմանիայում, Իտալիայում, Վրաստանում, Ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում, Միացյալ Արաբական Էմիրություններում, Հոլանդիայում: 2006 թ. ՀՀ-ում կազմակերպվել է «Խոսող քարերի երկիր» միջազգային ցուցահանդեսը: 2006 թ. զբոսաշրջության զարգացման ծրագրի շրջանակներում շարունակվում է ոլորտի գովազդատեղեկատվական համակարգի զարգացման գործընթացը, տպագրվում են գովազդային նյութեր, ապահովվում է մասնակցությունը միջազգային ցուցահանդեսներին: Զբոսաշրջության բնագավառում պետական քաղաքականության շրջանակներում իրականացվում են նաև այլ գործընթացներ, որոնցից են՝ ա) զբոսավարների և ուղեկցորդների լիցենզավորման գործընթացը²⁰, որն սկսվել է 2005 թ. հունվարից: Այսօր ոլորտում գործում են 102 լիցենզավորված զբոսավարներ և 3 ուղեկցորդներ²¹, բ) հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացը, որի շրջանակներում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից կամավորության սկզբունքով որակավորում են ստացել երեք հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված որակավորման կարգերին և ընթացակարգին համապատասխան²²: Կատարվել է ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտների համապատասխանության ստուգման գործընթաց, որի շրջանակներում ստուգվել են մի շարք հյուրանոցա-

¹⁹ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Ե., 2005:

²⁰ «Զբոսավարի և ուղեկցորդի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» ՀՀ կառավարության հ. 945-Ն որոշում, 10.VI.2004:

²¹ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի «Հայաստանի Հանրապետությունում զբոսավարի և ուղեկցորդի մասնագիտական որակավորման ստուգման թեստային հարցաշարերում ներառվող հարցերի ցանկը (ընդհանուր հարցաշարը) հաստատելու մասին» 2004 թ. հուլիսի 16-ի հ. 130-Ն (16.VII.2004) և «Հայաստանի Հանրապետությունում զբոսավարի և ուղեկցորդի կողմից անվանաքարտ կրելու կարգը հաստատելու մասին» հ. 212-Ն (17.X.2005) հրամանները:

²² «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության հ. 946-Ն որոշում (10.VI.2004):

յին օբյեկտներ Երևանում և Լոռու մարզում, պարզվել է դրանց համապատասխանությունը «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

Զբոսաշրջության ոլորտում ՀՀ կառավարության վարած կայուն քաղաքականության շնորհիվ ոլորտի գերակայությունը ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ուղղություններում կարելի է վստահաբար համարել անշրջելի իրողություն: Սակայն արդի համաշխարհային զարգացումները հաշվի առնելով՝ կարծում ենք, որ պետական քաղաքականության առաջիկա ուղղությունները մշակելիս անհրաժեշտ է հիմնական շեշտադրումներն ուղղել հանրապետությունում բարձր արդյունավետությամբ և մրցունակությամբ օժտված ժամանակակից զբոսաշրջային ինդուստրիա ստեղծելուն, որը կապահովի երկրի տնտեսության զգալի առաջընթացը՝ միաժամանակ, պահպանելով ու արդյունավետ օգտագործելով բնական և մշակութային ժառանգությունը:

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СФЕРЫ ТУРИЗМА В РА И ФОРМИРОВАНИЕ ЗАКОНОДАТЕЛЬНОГО ПОЛЯ

БАРСЕГЯН И. В.

Резюме

Формирование законодательного поля в сфере туризма даст возможность повысить качество туристских и гостиничных услуг, доведя их до уровня международных стандартов. Посредством формирования конкурентного поля армянский туристический бизнес станет конкурентоспособным на международном рынке, возрастет поток туристов в Армению и, тем самым, увеличится приток валюты в республику. Исходя из сказанного, на сегодняшний день главной целью государственной политики в области туризма в Армении является создание высокоэффективного и конкурентоспособного туристского комплекса.